պահպանիչով, իսկ երեկոյեան ի պատիւ դպրոցի և կրթական կառուցման նախաձեռնող և մեծ նեղութիւններով գլուխ հանող Եղիշէ վարդապետի տեղի ունեցաւ ընթրիք, որին ներկայ էր քաղաքի երիտասարդութիւնը, իսկ յունվարի 8-ին քաղաքացիք կրկին ճաշ տուին տեղական կլուբի դահլիճում, որտեղ ի միջի այլոց հաւաքուեց վաթսուն և ութ ռուբլի յօգուտ թուրք հայկական կոտորածների արկածեալների։ Պէտք է նկատել, որ ժողովուրդը սերտ կապած է իւր դպրոցին և յոյս ունի վերածելու այն չորս դասարանեան գիւղատնտեսական տնայնագործական դպրոցի։

Ուսուցիչ.

ԱՅԼ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԵՒ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ

Պրաւօսլաւ եկեղեցի ռուսաց

Церк. Вѣстникъ-ի № 45-ում տպուած է մի յօդուած «Աստուածպաշտական լեզու» վերնագրով, որի մէջ ի միջի այլոց յօդուածագիրն ասում է հետեւեալը.—

Ծանը դրութեան մէջն է պրաւօսլաւ քահանան ժամասացութեան միջոցին։ Նա համոզուած է, որ որչափ էլ աշխատի, չի կարող ոգեւորել աղօթողներին այն վառեմ մտքերով, որոնք կազմում են եկեղեցական աղօթքների և երգերի բովանդակութիւնը, բայց հնարաւորութիւն չունի իւր դարդին դարման գտնելու։ Մեր աղօթքներն ու եկեղեցական երգերն այնպէս են կազմուած, որ մի միայն խնամքով մեկնաբանելուց յետոյ կարող են հասկանալի դառնալ։ Ճիշտ է, քահանան կարող էր բացատրել անհասկանալի բառերն ու արտայայտութիւնները, բայց նա այդպիսով ստիպուած կլինէր ժամերգութիւն կատարել երկու լեզուով։ Աւելի բարւոք չէ հետզհետէ պարզ ձև տալ ժամակարգութեանը, քան բարդել այն մեկնաբանութիւններ աւելացնելով։ Մեր ժամերգութեանց ժամանակ կարգապահու-

թիւնը խանգարում է գլխաւորապէս այն պատճառով, որ ժողովուրդը աղօթքներից և երգերից ոչինչ չի հասկանում. իսկ երբ նկատում ես այդպիսիներին, պատասխանում են, որ անհասկանալի աղօթքների ընթերցանութեան ժամանակ ձանձրանում են կանգնելուց և որ իրենք եկեղեցի են յաճախում ձայնեղ սարկաւագի և լաւ խմբի երգեցողութիւնը լսելու: Մենք պէտք է հոգ տանենք, որ մեր աստուածպաշտական ժողովները բողոքականներից պակաս գրաւիչ չլինեն: Ուստի լաւ կլինէր հրաւիրել բարեպաշտ ծխականներին և հարցնել, թէ որ լեզուով առաւել լաւ է ժամերգութիւն կատարելը: Այդ պէտք է սկսենք ցածից ժողովրդից, որովհետև եթէ բարձրից սկսելու լինենք, եկեղեցու թշնամիները կարող են դէպքից օգուտ քաղել և ժողովրդի մէջ խռովութիւն առաջ բերել....

—Որ ժողովուրդը միշտ փափագել է հասկանալ ժամերգութեան լեզուն ու երգերի բովանդակութիւնը, որ նա ծարաւ է զգացել գիտակցաբար ընդունելու Աւետարանը և իւր կեանքը հաւատոյ պահանջների համապատասխան դարձնելու, դա էլ հին ճշմարտութիւն է, իսկ որ մատչելի լեզուով նրան եկեղեցական գրքեր տալը միշտ գլացել են, այդ էլ է հին ճշմարտութիւն: Բայց ցանկալի է, որ օր առաջ ուղղուի այդ մեծ պակասը, հակառակ դէպքում վաղը ձայնեղ սարկաւագներն ու լաւ երգեցիկ խմբերն էլ չեն կարողանալ եկեղեցի բերել ժողովրդին:

Համառուսական եկեղեցական ժողովի նախապատրաստական աշխատանքները.

Անցեալ տարուայ յուլիսին ռուսական Սինոդը առաջարկեց թեմական առաջնորդներին կազմել տեղական ժողովներ և որոշել եկեղեցական բարենորոգութեան խնդիրները: Թեմական առաջնորդները շատ տեղ կազմեցին յատուկ նշանակովի մասնաժողովներ այդ նպատակաւ, բայց հէնց հոգևորականութիւնը երբէք այդ մասնաժողովներին հաւատ չի ընծայում և նրանց չի ընդունում հոգևորականութեան կարծիքների արտայայտիչ: Ընդհակառակն՝ հոգևորականութեան տրամադրութեան և կարծեաց արտայայտիչ են համարում թեմական պատգամաւորների ժողովները, որոնք հնարաւորութիւն ունին կարծիք յայտնելու եկեղեցական բարենորոգումների մասին, ինչպէս այդ տեղի ունեցաւ Իրկուտսկ քաղաքում: Թեմական ժողովն այդ-